ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 54-Ա
«16» ՄԱՐՏԻ 2023Թ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N259-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայտարարել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը համալրելու համար մրցույթ՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնին՝

1) Հրապարակել պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունները՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N259-Ն որոշմամբ հաստատված կարգի N1 ձևի:

2) Ապահովել հայտարարությունների հրապարակումը և մրցույթների անցկացման ընթացակարգերը:

3/16/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ք.Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ մարտի 16 -ի
N 54 -Ա որոշման

Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը համալրելու համար մրցույթի հրապարակման ենթակա Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկը

1. «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արտավանի միջնակարգ դպրոց»
2. «ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց»
3. ՀՀ Վայոց ձոր մարզի «Զառիթափի միջնակարգ դպրոց»
4. «ՀՀ Վայոց ձոր մարզի Զեդեայի հիմնական դպրոց»
5. «ՀՀ Վայոց ձոր մարզի |Շատինի միջնակարգ դպրոց»
6. «ՀՀ Վայոց ձորի մարզի Չիվայի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»